« بوزانتيوم »
ارمنيجه يومى وسياسى غزته . صاحب امتياز ومديرِ مسئول
بوزانت كچيان
مطبعه واداره‌خانه‌سى باب عالى جاده‌سنده ۳۸ نمرولى دائرهٔ مخصوصه‌ده در

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**. Տարեկան 7 մէճտ. 6 ամս. 3½, 3 ամս. 2, Կ. Պոլսոյ համար 3 ամս. 36 ղրշ. Արտասահման 40 ֆր. 6 ամս. 20, 3 ամս. 10 ։ Թղթատարի ծախք մեր վրայ, բաց ի Բաթ Լոքալէ։

# ԲՈՒԶԱՆԴԻՈՆ

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ՔՍԱՆ ՓԱՐԱ — ՔՍԱՆ ՓԱՐԱ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲՈՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ
Իւրաքանչիւր թերթին կ'ստորագրէ մի միայն ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆԸ
Ան որ կ'ուղղուին ամէն գրութիւնք

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
*Directeur-Propriétaire*
PUZANT KÉTCHIAN
*Bab Aali Djeddéssi, No. 38*
CONSTANTINOPLE

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 356 | Կ. ՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ, 1897 ԴԵԿՏԵՄԲԵՐ 26/7 ՅՈՒՆ. 1898 | 14 ՇԱԲԱՆ 1315 | 26 ՔԵԱՆՈՒՆԻ ԷՎՎԷԼ 1313 | Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 356

## ՌՈՒՍԱՀԱՅՑ ԿԵԱՆՔԷՆ

### ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Վերջին Հրատարակութիւններ. — Կլոշէի «Ոսկի Շինողները». — Ֆրանսացի հեղինակները Ռուսահայոց մէջ. — «Նոյեմբերեանց կենսագրութիւնը». — «Անմոռանալի կնոջ դրութիւնը». — «Պարզ Բարոյներ». — Շիրվանզադէի «Ցաւագարը». — Ներկայացումներն ի Պաքու. — Տիֆլիս. — Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ»ն և «Պաղտասար աղբար»ը. — Դիրատանական անհամաձայնութիւններ։

ՊԱՔՈՒ, 8 Դեկտ.

ԳՐԱԿԱՆ ասպարէզին վրայ հիմա կ'երեւին կարգ մը թարգմանութիւններ, մեծագոյն մասամբ ռուսերէնէ, իսկ շատ քիչ են ֆրանսական եւ գերմանական հեղինակներու թարգմանութիւններ. այս վերջիններու մեծ մասն ալ ուղղակի բնագրէն չի թարգմանուիր, այլ ռուս թարգմանութիւններու վրայէն, այնպէս որ շատ անգամ հայերէնի մէջ բոլորովին տարբեր իմաստով, տարբեր բացատրութեամբ երեւան կուգայ քան ինչ որ հեղինակին արտադրութիւնն է։ Ցիշենք մի քանի այս կարգի գործեր. Կլոշէի «ՈՍԿԻ ՇԻՆՈՂՆԵՐԸ», թարգ. Մարտիրոսեանցի։ Սա ժողովրդական վէպ մ'է, բարոյական հիման վրայ կառուցուած, Երեւակայեցէ՛ք գիւղ մը, ուր ժողովուրդն ապականուած, ...

...

Բաղաքին մէջ, առէք մ'ի վեր ծաղիկը, վարդախառն և կեղծմաշկը, մանուկներու աչքի, կենաց և կոկորդի այս երեք յաւիտենական թշնամիները ձեռք ձեռքի տուած՝ խեղճ պզտիկները չարաթներով անկողնոյ կ'ենթարկեն և մերթ զոհեր ալ կ'առնուն կ'տանին։ Զարմանալին հոս է որ կան ծնողքներ որ տակաւին հաւատք չունին պատուաստի փրկարար ազդեցութեան վրայ։ Իրա՛և է թէ մէկ անգամ պատուաստուողներէն ալ ծաղկախտէ բռնուողներ եղած են, և այդ պատճառով՝ բժիշկներ կրկնապատուաստ կը յանձնարարեն։ Շատեր՝ թարմ պատուաստով չպատուաստուելնուն պատճառով ծաղկախտէ բռնուելու ենթակայ կ'ըլլան։ Հինցած շիճուկն անազդեցիկ է։ Գաղափար մը տալու համար այս երբեակ տարափոխիկներու զոհերուն վրայ, հոս կ'դնեմ 25 տան վրայ իմ ձեռք բերած սա թիւերը. ծաղիկէ մեռնող՝ 7, կարմրախտէ՝ 8, կեղծմաշկէ 3։ Տքդ. Ռուփ փրկարար շիճուկն անգտանելի է հոս արդէն։

*** Կանխահաս ձմրան պատճառաւ թշուառութիւնն աւելի կ'ընդարձակի։ Առաջին ձիւնն հոս Հոկտ. 18ին ...

...

Մ. ՇԱՀՆԱԶԱՐ

## ՆԻԿՈՄԵԴԻԱՅ ԼՈՒՐԵՐ ԿԱՐԻՆԷ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԲՈՒԶԱՆԴԻՈՆԻ»)

ԿԱՐԻՆ, 10 Դեկտ.

